

## Դիանա Հակոբյան

### ԵՐԵՄԻԱ ՄԵՂՐԵՑՈՒ «ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ը՝ ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ

*Բանալի բառեր*- Երեմիա Մեղրեցի, Բառգիրք հայոց, դար, բառարանագրություն:

Հայ բառարանագրությունն ունի անցյալի հարուստ պատմություն. մեր պատմիչները, գրելով իրենց աշխատությունները, հաճախ օգտվում էին օտար բառերից, որոնց բացատրությունը փորձում էին հասկանալի դարձնել հանրությանը, օրինակ՝ Եզնիկ Կողբացու «Եղծ Աղանդոց» երկասիրության մեջ հեղինակի կողմից գործածված է հունարեն «հիլվե» բառը, որը բացատրում է՝ «**հիլվն որ թարգմանի նիլթ**» (*«հյուլեն, որ թարգմանվում է նյութ»*)<sup>1</sup>:

Կա ևս մեկ ձև հին ձեռագրերի մեջ՝ լուսանցքներում տրվում էր համապատասխան տողում կիրառված անհասկանալի բառի բացատրությունը կամ գրքի վերջում գրչի կողմից կցվում էր գրքի մեջ գործածված անհասկանալի բառերի ցանկը՝ յուրովի բացատրությամբ<sup>2</sup>:

Հայերեն առաջին համակարգված և այբբենական կարգով դասակարգված ձեռագիր բառարանը եղել է Արիստակես Գրչի «Գրչագիրք Բառգիրք» կամ «Բառարան Հայոց»-ը: Արիստակես Գրչի բառարանի համար հիմք է դարձել «Բառք սուրբ գրոց»-ը, «Բառք խորանին Մովսիսի», ինչպես նաև Աստվածաշնչում առկա անհասկանալի բառերի մի մասը: Նշված գրքերից բացի՝ օգտագործվել են այլ գրքեր ևս, որոնք հիշատակված չեն<sup>3</sup>: Չնայած բառարանագրական այս վաղագույն շրջանի պատմությանը՝ հայերեն տպագիր բառարանները ստղծվել են 17-րդ դ. սկզբներից: Առաջին երկլեզու տպագիր բառարանը եղել է Ֆրանչեսկո Ռիվոլայի «Հայ - լատիներեն բառարան»-ը (*«Dictionarium Armeno - Latinum»*): Թվարկվածից զատ՝ առանձին հիշատակության է արժանի Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոց»-ը, որը համարվում է հայերեն առաջին տպագիր ընդարձակ բառարանը:

Երեմիա Մեղրեցին եղել է էջմիածնի միաբաններից, որին բառարանագրության գործում օգնել է Սարգիս անունով մի եպիսկոպոս<sup>4</sup>: Բառարանին կից այս նյութերը տպագրիչ տիրացու Մուրադին են տվել Հակոբ վարդապետը և տիրացու Գեորգը<sup>5</sup> (առաջին տպագրության ժամանակ):

Հայ մշակույթի պատմության մեջ Երեմիա Մեղրեցու անունով հայտնի «Բառգիրք Հայոց» բառարանը մեզ է հասել բազմաթիվ ձեռագրերով, սակայն միայն մի ձեռագրի վրա է հիմնված տպագիր օրինակը: Այն լի է ոչ միայն նոր ու անստույգ բառերով, այլև աղավաղումներով, գրչագրական ու տպագրական վրիպակներով: Այդ թերությունները միայն հեղինակային և տպագրական չեն, նաև բառարանի համար նախատեսվող հին աղբյուրներում առկա սխալներն են փոխանցվել «Բառգիրք»:

«Բառգիրք Հայոց»-ի տպագրությունը չափազանց կարևոր իրադարձություն էր հայ մշակույթի և մասնավորապես հայ բառարանագրության դարավոր պատմության մեջ: Բառարանը բաղկացած է մոտ 8500 բառահոդվածից և 344 էջից, որի վերջնահատվածում բառարանից դուրս, զետեղված են քաղաքների անունները բացատրող մի բառացանկ՝ «**Աշխա ռհացոյց**» խորագրով: Գրքի ամենավերջին հատվածում՝ 344-րդ էջում, առկա է մի հիշատակարան, որում հեղինակը նկարագրում է իր կատարած աշխատանքի պատմության ընթացքը:

Հիշատակարանի տիտղոսաթերթում նույն տարեթվի կողքին նշվում են նաև տարբեր ամիսներ՝ հունիս և հոկտեմբեր: Դա տպագրման ժամանակի երկու ծայրա-

<sup>1</sup> Տե՛ս Աղայան Է., Լեզվաբանության ներածություն, Ե., 2010, էջ 167:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս Զարբհանալեան Գ., Պատմութիւն հայերէն դպրութեան, Կենտրոն, 1878, էջ 405:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում էջ 406-407:

<sup>5</sup> Տե՛ս Ամալյան Հ., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, էջ 202-205:

կետերն են, այսինքն՝ առաջին տպագրությունը սկսվել է 1698 թ. հուլիսի 10-ին և ավարտվել է նույն թվականի հոկտեմբերի 20-ին<sup>1</sup> Ամստերդամից Իտալիայի Ալիկոռնա (Լիվոռնո) քաղաք<sup>2</sup> տեղափոխված «Ս. Էջմիածնի և Ս. Սարգիս գորավարի» անունը կրող հայկական տպարանում<sup>3</sup>: Տպագրության քանակը հայտնի չէ, սակայն մեծ պահանջարկի շնորհիվ գրեթե անփոփոխ վիճակում և նույն վերտառությամբ վերահրատարակվել է Կոստանդնուպոլսում՝ 1728 թ.: Այս անգամ տպագրվում է տեր Կարապետ սրբազան կաթողիկոսի օրոք: Այն 576 էջանոց միասյուն բառարան է, որի մասին հետազոտողները իրենց դժգոհություն են հայտնել<sup>4</sup>:

«Բառգիրք Հայոց»-ը եղել է իր ժամանակի միակ տպագիր բացատրական բառարանը, որը լայն գործածություն է ունեցել և համարվել է նաև ուսումնաստանողական ձեռնարկ<sup>5</sup>: Այն ամփոփում է նախկինում երևան եկած հայերեն գրեթե բոլոր ձեռագիր բառարանների նյութերը: Անկախ նրա ծավալի, բացատրական մասի, տպագրական որակի և այլ հարցերում տեղ գտած թերացումներից՝ այն ժամանակին բարձր են գնահատել, օրինակ՝ Մխիթարյան միաբանության հայրերը, ամենից առաջ՝ Մխիթար Սեբաստացին, երբ ձեռնամուխ է եղել իր ծավալով աննախադեպ, բառարանագրական մշակման տեսանկյունից համապարփակ, ընդ որում ժամանակի եվրոպական բառարանագրության չափանիշներով կազմված «Բառգիրք հայկազեան լեզուի» կոթողային աշխատության ստեղծմանը: Կարևոր հանգամանք է Մխիթար Սեբաստացու ականարկը Երեմիա Մեղրեցու բառարանի վերաբերյալ, այն է՝ բառարանը իրեն ամենևին չէր կարող օգնել, որովհետև «... ի բազում տեղիս մեկնող բառքն առաւել խրթինեն, քան զմեկնելիս»<sup>6</sup> («... շատ տեղերում մեկնաբանվող բառերը ավելի խրթին են, քան չմեկնաբանվողները»):

Այնուհետև Երեմիա Մեղրեցու բառարանին տարբեր առիթներով անդրադարձել են Գ. Ղափանցյանը, Է. Աղայանը և այլք: Անշուշտ, մեծ է հատկապես Հ. Աճառյանի դերը բառարանի ուսումնասիրության հարցում: Նա իր «Հայերենի արմատական բառարան»-ը գրելիս ուսումնասիրության է ենթարկել Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոց»-ը, որում առկա բառերից շատերն անհասկանալի էին<sup>7</sup>:

«Բառգիրք Հայոց»-ը կազմված է 12-րդ դարի «Բառք քերթողականք» բառարանի հիման վրա, որը պարունակում էր 370 բառահոդված: Հեղինակն օգտվել է նաև «Բառք եբրայեցոց» կոչվող բառարանից, «Բառք Փիլոնի», «Բառք խորանին», «Եւթներորդ գլուխ գրոցս» բառարաններից<sup>8</sup>: Բառարանում տեղ են գտել նաև Աստվածաշնչից և այլ տեքստերից վերցված բառեր և բառահոդվածներ<sup>9</sup>:

Հ. Ամայանը վիճակագրության միջոցով ներկայացնում է աղբյուրները՝ նշելով յուրաքանչյուրից «Բառգիրք Հայոց»-ին անցած բառերի քանակը: Այն ունի հետևյալ տեսքը<sup>10</sup>. «Բառք քերթողականք»՝ 3500 բառ, «Բառք եբրայեցոց»՝ 990 բառ, «Բառք Հայոց»՝ 1700 բառ, «Բառք Փիլոնի»՝ 140 բառ, «Բառք խորանին»՝ 90 բառ, «Եւթներորդ գլուխ գրոցս»՝ 250 բառ, ընդամենը՝ 6670 բառ:

Այս թվարկված քանակը միայն հին բառարաններից է, կան բառեր, որոնք վերցված են անհայտ գրական երկերից, խոսակցական լեզվում օգտագործվող բառաձևերից, որոնց թիվը հասնում է 830-ի, իսկ ամբողջ բառարանի բառապաշարը բաղկացած է 7500 բառից: Սա էլ համարվում է քննվող բառարանի սկզբնական օրինակը, որը պատմաբանասիրության մեջ, ինչպես արդեն նշել ենք վերոգրյալում, կրում է «Բառ»

<sup>1</sup> Տե՛ս Թոսունյան Գ., Գրաբարի բառարանագրությունը, Ե., 2006, էջ 26:

<sup>2</sup> Տե՛ս Զարբհանալեան Գ., նշվ. աշխ., էջ 407:

<sup>3</sup> Տե՛ս Ամայան Հ., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (XVI-XVII դդ.), Ե., 1971, էջ 202:

<sup>4</sup> Տե՛ս Թոսունյան Գ., Գրաբարի բառարանագրությունը, Ե., 2006, էջ 26:

<sup>5</sup> Տե՛ս Ղազարյան Ռ., Ե. Մեղրեցու բառարանը և նրա աղբյուրը, «ԼՀԳ», 1968, № 6, էջ 48:

<sup>6</sup> Թոսունյան Գ., Գրաբարի բառարանագրությունը, էջ 35:

<sup>7</sup> Տե՛ս Համբարձումյան Վ., Բառաքննական դիտարկումներ Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոցի» մի քանի բառերի շուրջ, «ՊԲՀ», 2010, № 3, էջ 162:

<sup>8</sup> Տե՛ս Ամայան Հ., նշվ. աշխ., էջ 188:

<sup>9</sup> Տե՛ս «Բառգիրք Հայոց», քննական բնագիր, առաջ. և ծանոթ. Հ. Ամայանի., Ե., 1975, էջ Զ:

<sup>10</sup> Տե՛ս Ամայան Հ., նշվ. աշխ., էջ 193:

գիրք Հայոց» կամ կրճատ՝ «Բառագիրք» վերնագիրը, չնայած միայն տպագիր օրինակին հատուկ այս խորագիրը չունի բառարանի ձեռագիր օրինակներից ոչ մեկը<sup>1</sup>:

Միջին դարերում ընդունված էր գաղտնավանկի, ինչպես և բառասկզբի հիշյալ կապակցություններից առաջ լսվող «ը»-ն գրել: Այս երևույթը շարունակվում է նաև 18-րդ դարում: Շատ հեղինակներ, հետևելով միջնադարի գրիչներին, գաղտնավանկի «ը»-ն գրում են՝ ա) երբ այն հնչյունափոխության հետևանք է կամ բ) բառասկզբում՝ **ժբ, սկ, ստ, շտ, զբ** և նման կապակցություններից առաջ: Երեմիա Մեղրեցու բառարանում առկա է առաջին տարբերակը, օրինակ՝ *սնընդարար, ախընթոր, հընծան, ծնընդական* և այլն<sup>2</sup>: Երեմիա Մեղրեցու գրքերում, ինչպես նաև բառարանում բաղաձայնանախորդ թվացյալ «ու»-ն կա՛մ պահպանված է, կա՛մ փոխարինված է «ւ» տառով (միջնադարյան ուղղագրություն): Օրինակ՝ *թշուառութիւն, արտասուիլ, մահուամբ, դժուար, անուան, թուի, վայելուածս*<sup>3</sup>:

Հոմանիչների միջին հայերենյան ձեռագիր բառարաններում հանդիպում են բառեր, որոնք արձանագրված չեն գրաբարի բառարաններում, այդ բառերը կարելի է դիտել որպես նորակազմ բառեր: Նման բառեր Երեմիա Մեղրեցու «Բառագիրք Հայոց»-ում նույնպես կան, օրինակ՝ «Գգրել» բառը հիշատակված է «խոչել», «գերամիտ»-ը՝ «փարթամ մտօք», «դլխիթ, դլխիտ, դխխիթ, դըխդիթ, դ(ը)խին, դըխխին, դդխին, դխխին» այս բառերի շարքը բացատրվում են իբրև «դժվարին, տաժանելի, վտանգավոր, աղետավոր»<sup>4</sup>:

«Բառագիրք Հայոց»-ում բառերը հիմնականում բացատրված են հոմանիչների թվարկմամբ, շատ քիչ գլխաբառեր բացատրված են նկարագրական եղանակով, օրինակ՝ «Ջաղատ - նշանակ գատական, որ կոչի գիծ յերկայն ծրեալ. եւ լայնն մակերեւութիւն մարմին», «Քստմնելի - սոսկալի, կամ դողալի, կամ զարմանալի, կամ ահեղալի»<sup>5</sup>, «Ազգ - սեռ, կամ ցեղ», «Ազինք - մանր ազգեր, որ չեն անուանիք», «Ազն - ազգ», «Ազոխ - ժուռ, կամ խակ, կամ անհաս», «Ալելուայ- օրինեցէք զտէր, կամ զովեցէք զաստուած, և ուրախութեան երգ», «Վասն - նախդիր, որ զսեռական պահանջէ. սակս, կամ հաղագս, կամ համար»<sup>6</sup> և այլն:

Այդ նույն իրողությունը վերաբերում է նաև աշխարհագրական անուններին, որոնց քանակը հասնում է 187-ի: Օրինակ՝ «Աւետեաց երկիր - Երուսաղէմ է», «Բաբելոն - Բաղդատ է», «Բերիա- Հալապ է», «Գալիլեա - Յերուսաղէմայ քովն է», «Եգիպտոս - Մըսըր է» և այլն<sup>7</sup>:

«Բառագիրք»-ում տեղ են գտել նաև լատինաբան հայերենի տարաբնույթ ձևեր: Այդ իրողությունը պայմանավորված է նրանով, որ լատինաբանությունը հայերենում սկիզբ է առել 14-րդ դարի սկզբին<sup>8</sup>: Հայտնի է, որ լատինաբանությունը մեզանում արհեստական միջամտությամբ տարբեր չափերով գործելիս է եղել մինչև 18-րդ դ. 70-80-ական թթ., ինչպես նաև այն, որ լատինաբանության հաղթահարումը Մխիթարյանների՝ այդ ուղղությամբ գործադրած ջանքերի արդյունքն է<sup>9</sup>: Լատինաբանությունները կա՛մ հանդես են գալիս բառահոգվածի տեսքով, կա՛մ գործածվում են նյութը շարադրելիս: Լատինաբան հայերենը, ինչպես հայտնի է, երևան է եկել այն պատճառով, որ լատին քարոզիչները լեզվական հարցում կանգնած էին որոշակի տարակուսանքի առաջ: Այդ դարում հին գրական հայերենը (*գրաբարը*) անդառնալիորեն կորցրել էր կենդանի հաղորդակցական միջոց լինելու հնարավորությունը, միջին գրական («կիլիկյան») հայերենը «գրականացած» չէր հատկապես կրոնական - եկեղեցական գործառական ոճի

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս Գյուլբուրադյան Ս., Հայերենի XVIII դ. ուղղագրության մասին, «ՊԲՀ», 1973, № 1, էջ 87:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս Հովհաննիսյան Ն., Նորակազմ բառեր հոմանիչների միջինհայերենյան ձեռագիր բառարաններում, «ՊԲՀ», 2002, № 1, էջ 176-179:

<sup>5</sup> Տե՛ս Թոսունյան Գ., Բառարանագիտության պատմությունից, «ԼՀԳ», 2002, № 1, էջ 142:

<sup>6</sup> Տե՛ս Թոսունյան Գ., Գրաբարի բառարանագրությունը, էջ 27:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>8</sup> Տե՛ս Համբարձումյան Վ., Լատինաբան ձևերի գործածություն Երեմիա Մեղրեցու «Բառագիրք Հայոց»-ում, «Լեզու և լեզվաբանություն», 2014, № 1-2, էջ 15:

<sup>9</sup> Տե՛ս Համբարձումյան Վ., Ակնարկներ հայ բառարանագրության պատմության, հ. 2, Ե., 2015, էջ 93:

առունով, որը, ինչպես տեսանք, միարարական շարժման բուն և ամենակարևոր բնագավառն էր: Ուստի նրանք ձեռնարկում են նաև լեզվի մշակման գործը<sup>1</sup>:

Հետևաբար, պարզ է, թե ինչու «Բառգիրք Հայոց»-ում կան նման քանակությամբ լատինաբան հայերեն բառեր, որոնք գրավոր խոսքում դարձել էին նաև սովորական<sup>2</sup>:

Երեմիա Մեղրեցու բառարանում կան բազմաթիվ բառեր, որոնք կազմված են հունական դպրոցի հեղինակների ստեղծած նախամասնիկներով, օրինակ՝ *ապերասան, առընկալեալ, արտամերժեալ, բակառեալ, բաղադրել, բարօրութիւն, բացադրել, դերանուն, դերարկել, ենթակայութիւն, ընդդիմահար, ըստզտանել, թախառ, թերիակայ, իներեութիւն, հակագուպար, համապատիւ, ներէութիւն, պատարեալ, մականուն, շաղադրել, ստորոգել, վերադասել, տարրորոշել, քողասուզեալ*<sup>3</sup> և այլն:

«Բառգիրք Հայոց»-ում կան «Կանոնագրքի», «Ճաշոցի», «Կնիք հավատոյի», «Անկանոն գրոցի», Եղիշեի, Անանիա Շիրակացու, Ոսկեբերանի, Եփրեմի, Բարսեղի, Աբրահամ Կրետացու, Կյուրեղ Ալեքսանդրացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Թովմա Արծրունու, Գրիգոր Նարեկացու, Մատթեոս Ուռհայեցու և այլ հեղինակների երկերում հանդիպող այնպիսի հազվագյուտ բառեր, ինչպես՝ *ափսիուսովթ, բարշակ, գեղազան դաստակ, երախան, զօշոտ, թեպուր, խարբայիլ, համանձն, դերբաղոն, յարագել, նիտան, ովփագ, սարսռել, փարահ, օղերծեալ* և այլն<sup>4</sup>:

Բառարանում կան այնպիսի բառեր, որոնք ժամանակին համարվում էին նորաբանություններ, սակայն արդի շրջանում այդ բառերից շատերը գտնվում են լայն շրջանառության մեջ, իսկ որոշները դուրս են գործածությունից, օրինակ.

	<i>Բառը</i> <sup>5</sup>	<i>Բառգիրք</i> <sup>6</sup>	<i>Բացատրական բառարան</i> <sup>7</sup>	<i>ՆՀԲ</i> <sup>8</sup>	<i>Ստացված արդյունքը</i>
1.	արտաքաւութիւն	ելք	-	-	-
2.	ծառուիի	չար կին	-	-	-
3.	մատնափայտ	ճաղ	-	-	-
4.	նիհար	կարօտ	լղար	լղար	վերաիմաստավորված
5.	գոյապատիւ	էապատիւ	-	-	-
6.	ժողովատեսուչ	պարադիտող	-	-	-
7.	ոգելական	բարբառական	-	-	-
8.	բառակ	տետրակ	1. Չորս 2. Քառակուսի ավազան, որով ձեթ են ստանում	բառեակ	բառիմաստի ընդլայնում

Երեմիա Մեղրեցու բառարանով հետաքրքրված է եղել լեզվաբան Ա. Սուքիասյանը: Իր «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ը կազմելիս<sup>9</sup> նա նպատակ է ունեցել ընդգրկել այն բառերը, որոնք հնարավորին չափ վեր էին հանում հայերենի հին և միջին շրջանների հոմանշային շարքերի առանձնահատկությունները՝ համադրելով ժամանակի բառաֆոնդի հետ: Անկասկած, բառարանագրի հնատիպ գրքերի շարքը համարում էր նաև Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոց»-ը:

Հայտնի է, որ հանրության բառամթերքում ոչ բոլոր բառերն են վերածվում հնաբառերի և կան այնպիսիները, որոնք ցայսօր էլ կիրառվում են հասարակության բառապաշարում, իսկ որոշներն էլ գտնվում են ակտիվ գործածության մեջ, օրինակ՝

<sup>1</sup> Տե՛ս Համբարձումյան Վ., Գրական հայերենի հունաբան և լատինաբան տարբերակների փոխհարաբերության հարցի շուրջ, «ԼՀԳ», 2008, № 2, էջ 138:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս Թոսունյան Գ., Գրաբարի բառարանագրությունը, էջ 30:

<sup>4</sup> Տե՛ս Ամալյան Հ., Երեմիա Մեղրեցու բառարանը հայ բանասիրության մեջ, «Բանբեր Մատենադարանի», 1971, №10, Ե., էջ 254:

<sup>5</sup> Նույն տեղում էջ 257:

<sup>6</sup> Տե՛ս Ամալյան Հ., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, էջ 215:

<sup>7</sup> Տե՛ս Մալխասյանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Ե., 1944, էջ 462, 555:

<sup>8</sup> Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Վենետիկ, 1836, էջ 425, 991:

<sup>9</sup> Տե՛ս Հովհաննիսյան Ն., Հայերենի հոմանշային շարքերի համադրական քննության փորձ, «ԼՀԳ», 2005, № 1, էջ 29:

*ուռուցեալ, փքացեալ* բառերը, որոնք կարելի է ենթադրել, որ այսօր էլ խոսակցական լեզվում օգտագործվող *ուռած- փքված* արտահայտության համար աղբյուր կարող են ծառայած լինել քննվող բառարանները, ինչպես նաև ընդգրկված արդի բացատրական բառարաններում՝ «գոռոզանալ, ամբարտավանանալ» փոխաբերական իմաստով ունեն և՛ *փքվելը*, և՛ *ուռչելը*, և՛ *ուռած - փքվածը*<sup>1</sup>:

Գ. Ջահուկյանը իր բառաքննական հոդվածներում ուսումնասիրել է 44 բառ, որոնց աղբյուրը եղել է Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոց»-ը: Նա պարզում է որոշ բառերի ծագումը, ճշգրտում առաջարկված առանձին ստուգաբանություններ և իրականացնում բառաքննական այլևայլ դիտողություններ, օրինակ՝ Ազեկա - «արեգակ», Բազեկայ - «արեգակն», Ընջուղ - «արջառ, երինջ, հորթ» և այլն<sup>2</sup>: Նման բառաքննական աշխատանք կատարել է նաև Լ. Հովհաննիսյանը՝ գործածելով 25 բառ: Նրա հետազոտական աշխատանքի խնդիրն էր բացահայտել՝ արդյո՞ք այդ բառերը կիրառվում էին 5-6-րդ դդ. գրաբար ինքնուրույն և թարգմանական մատենագրության մեջ: Քննությունը ցույց տվեց, որ բառերի մի մասը գործածվել է 5-6-րդ դդ., օրինակ՝ «ակադիմական» նշանակել է «հակառակորդ» (Դավիթ Անհաղթ), «ստնանաւորք»՝ «վարձաւորք» (Եվսեբիոս Եմեսացի) և այլն<sup>3</sup>:

Գ. Թոսունյանն իր «Գրաբարի բառարանագրությունը»՝ աշխատանքում ընդգրկել է Երեմիա Մեղրեցու «Բառգիրք»-ը<sup>4</sup>: Հեղինակն ուղենշում է իր գերխնդիրը, այն է՝ պարզել գրաբար բառարանագրության անցած ուղին՝ սկզբնավորումից մինչև մեր օրերը: Իսկ այդ նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է քննության առնել գրաբարի տարբեր տեսակի բառարաններ՝ սկսած Ֆրանչիսկո Ռիվոլայի «Բառագիրք Հայոց»-ից (Միլան, 1621 թ.)<sup>5</sup>:

Սակայն խոսելով խնդրո առարկա բառարանի արդյունավետության և դրական կողմերից՝ պետք է հիշեցնենք, որ վերոգրյալում ակնարկել ենք նաև թերությունների մասին: Այդ թերություններից են բազմաթիվ տպագրական վրիպակները, որոնք հատկապես մեծ դժվարություններ են առաջացնում բառարանից օգտվելիս: Բառարանի թե՛ առաջին, թե՛ երկրորդ տարբերակներում առկա թերությունները շտկել է Ամալյանը, որը իրականացրել է գրքի երրորդ խմբագրությունը՝ բառարանի քննական բնագիրը կազմելու նպատակով:

Ըստ Հ. Ամալյանի՝ մինչև X դ. հայ բառարանագրությունն ունեցել է միայն գործնական նպատակ, հետևաբար ձեռագրերում կան բառարանագրական հարյուրավոր աշխատանքներ, անձանոթ բառերի բացատրության ցանկեր (գլոսարիաներ): Հետաքրքրական է, որ մինչև XIII դ. «Բառագիրք» կամ «Բառգիրք» անվանումները չեն հանդիպում (առաջին անգամ դրանք կիրառել է XIII դ. հեղինակ Հովհաննես Երզնկացին), գործածվում են *բառք* և *սահմանք* բառերը, օրինակ՝ «Բառք յունարէն», «Բառք Փիլոնի», «Բառք եբրայեցւոց», «Սահմանք իմաստասիրականք» և այլն<sup>6</sup>:

Հ. Ամալյանը իր աշխատանքում առաջնահերթ ուշադրություն է դարձրել վերնագրի վերականգմանը, որից հետո համեմատել է բառարանում ընդգրկված բառերը տարբեր ձեռագրերում եղած բնագրային բառերի հետ, մատյանների միջոցով պարզել է շատ բառերի իմաստներ, ձեռագրերի օգնությամբ ավելացրել է բավականին շատ բառաձևերի հոմանիշներ, առանձնացրել գլխաբառերը, ոչ հոմանիշ բառերը, որոնք թյուրիմացաբար սպրդել են բառահոդվածների մեջ, պարզաբանել է անստույգ և չվկայված մոտ 100 բառի ծագում: Խմբագրությունից խմբագրություն փոխվել ու աճել է բառարանի բառացանկը, այսպես՝ առաջին հրատարակությունն ուներ՝ 8130, երկրորդը՝ 8650, իսկ երրորդը՝ 8832 բառ<sup>7</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 30:

<sup>2</sup> Տե՛ս Թոսունյան Գ., Գրաբարի բառարանագրությունը, էջ 31:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս Մկրտչյան Ե., «Գ. Թոսունյան», Գրաբարի բառարանագրությունը (գրախոսություն), «ՊԲՀ», 2007, № 2, էջ 294:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>6</sup> Տե՛ս Մկրտչյան Ե., նշվ. աշխ., էջ 295:

<sup>7</sup> Տե՛ս Թոսունյան Գ., Գրաբարի բառարանագրությունը, էջ 28-30:

«Բառգիրք Հայոց»-ը իր կարևոր նշանակությունն ունի ուշ միջնադարյան գրավոր աղբյուրների մեջ՝ հայերենի պատմության ուսումնասիրության համար: Նրանում դեռևս մնում են շատ հարցեր և «մութ տեղեր», որոնք հետազայում ևս կարող են ավելի մեծ ուշադրության առարկա լինել հայերենի ոչ միայն բառաքնության, այլև առհասարակ բառապաշարի տեսանկյունից:

**Диана Акопян, «Армянский словарь» Ерема Мегреци как первый содержательный армянский словарь**Армянский Словарь,-Одним из достижений истории армянской лексикографии является толковый Армянский лексикографический словарь написанный Еремом Мегреци. Словарь содержит не только слова армянской лексики, но и различные формы латинского языка. В словаре есть и недостатки. Данная книга была рассмотрена комплексно. Было проведено словарно – лексичвское сравнение из немногих слов, в результате что показали изменения значений и частоту применения некоторых слов

**Ключевые слова:** Еремия Мегреци, Армянский словарь, век, лексикография

**Diana Hakobyan, Eremia Meghreci's «Armenian dictionary» as the first wide Armenian dictionary**,-One of the masterpieces in Armenian Lexicography is the “Armenian Dictionary” by Eremia Meghreci. The dictionary contains not only words belonging to Armenian vocabulary, but also different ways of Latinist Armenian. There are shortcomings in the dictionary. We have examined it comprehensively. We have done lexical comparision by means of few words. As a result we have shown the lexical changes of the words and the frequency of application.

**Key words:** Eremia Meghreci, Century, Lexicography, Armenian Dictionary